



ARF Canada

Ընկեր Արրահամ (Արօ) Աշնեան ծնած է 1925-ին, Հալէպ: 13 տարեկանին մաս կը կազմէ Լիբանանի Հ.Յ.Դ. «Բարգէն Սիւնի» պատանեկան միութեան: Անդամագրուած էր նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի:

1948-ին կը կատարէ իր դաշնակցականի երդումը եւ մաս կը կազմէ Հ.Յ.Դ. «Քրիստափոր» կոմիտէութեան, դառնալով հաւատարիմ ծառան Հ.Յ.Դ.ի գաղափարական մեծ ընտանիքին:

1975-ին, երբ Լիբանանի մէջ կը սկսի քաղաքացիական պատերազմը, ընկեր Արօ արդէն շրջանի Կեդրոնական Կոմիտէի անդամ է:

Այդ քաղաքացիական պատերազմին Հ.Յ.Դաշնակցութիւնը, իր կոչումին հաւատարիմ՝ կը ստանձնէ շրջանի հայութեան ինքնապաշտպանութիւնը:

Միջին Արեւելքի Հայ Դատի խարխիսներէն մէկն ըլլալով Լիբանանը, անհրաժեշտ էր, որ պահուէր այդ գաղութին ինքնուրոյն հայկական դիմագիծը եւ ահա այս ծանր պարտականութիւնը կը ստանձնէ որպէս մարտական եւ շրջանի ապահովական պատասխանատու Դաշնակցական Արրահամ Աշնեանը:

Բնաւորութեամբ հանդարտ եւ պարտաճանաչ: Դաշնակցութեան հին օրերէն դաշնակցական հայդուկապետ եւ ռազմագէտ Նիկոլ Դումանի յետնորդն էր ան:

Դաշնակցականի մարտական խիզախութիւնն ու անսպառ կորովը, խստապահանջ կարգապահութիւնն ու անխարդախ նուիրումը եղան ընկեր Արոյի ցայտուն յատկանիշները:

Ընկեր Արօ կը մարմնաւորէր արդարադատ բազուկը 1970-ական թուականներուն ծաւալած Հայ Դատի ուժական պայքարին:

Ան կը պատկանէր Հ.Յ. Դաշնակցութեան սփիւռքեան այն հաւատաւոր սերունդին, որ մեծ ներդրում ունեցաւ կուսակցութեան յեղափոխական աւանդները երիտասարդութեան միտքին ու հոգիին մէջ վերանորոգելու իմաստով:

Իր բովանդակ կեանքին ընթացքին ընկեր Արօ տիրական ազդեցութեամբ կլանեց Դաշնակցութեան եկող եւ Հայ Դատին համար պայքարի դաշտ նետուելու պատրաստ երիտասարդները...

29 Դեկտեմբեր 1982-ին, Չորեքշաբթի առաւօտեան, ընկեր Արրահամ Աշնեան կ'առեւանգուի, երբ ան Էշրեֆիէի իր բնակարանէն կ'ուղղուէր դէպի Պուրճ Համուտի իր գործատեղին:

Անոր ինքնաշարժը, կուսակցական ընկերներու հետապնդումով, կը գտնուի յաջորդ առտու, Համրա թաղամասին մէջ:

Բայց այնուհետեւ, հակառակ թափուած ճիգերուն, կարելի չ'ըլլար գտնել Աշնեանի հետքը:

Յառաջիկայ օրերուն թէ՛ մամուլով, թէ՛ թղթիկներու ձեւին տակ, հայ ազգային երեք կուսակցութիւնները (Հ.Յ.Դ., Ս.Դ.Հ.Կ., Ռ.Ա.Կ.) լոյս կ'ընծայեն հաղորդագրութիւն մը, որ ուժգնօրէն կը դատապարտէ առեւանգման արարքը:

Առեւանգման լուրը անմիջապէս բողոքի մեծ ալիք մը կը բարձրացնէ կուսակցական եւ համահայկական առումով:

Ծուտով բացայայտ կը դառնայ, որ առեւանգման ետին կը գտնուի միայն մէկ հասցէ՝
թուրք պետութիւնը եւ անոր գաղտնի սպասարկութիւնները:

Ընկեր Աբօն, այնուհետեւ, կը մնայ անհետ կորած:

Այսօր, Պուրն Համուտի մէջ կը գործէ «Աբրահամ Աշճեան» Երիտասարդական-
Ուսանողական կեդրոնը, ինչպէս նաեւ Պուրն Համուտի սրտին մէջ, մայր փողոցներէն
մէկը անուանուած է «Աբրահամ Աշճեան»:

